

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Օրակարգ.

1. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Ադրինե Գարեգինի Բաբլոյանի երաշխավորումը դոցենտի կոչմանը:
2. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Մարիա Իգորի Զասլավսկայայի երաշխավորումը պրոֆեսորի կոչմանը:
3. ԵՊՀ 2016-2020 ռազմավարական ծրագրի հիման վրա Սոցիոլոգիայի ֆակուլտետի ծրագրային գործողությունների պլանավորման և համադասման հարցը:
4. ԵՊՀ հարյուրամյակին նվիրված միջոցառումների վերաբերյալ ֆակուլտետի առաջարկների մշակումն ու ներկայացումը:
5. <<Եզնիկ Կողբացու>> անվան անվանական կրթաթոշակի տրամադրման հարցը:

**Լսեցին** 1. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Ադրինե Գարեգինի Բաբլոյանի երաշխավորումը դոցենտի կոչմանը:

**Ելույթ ունեցան`** Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

**Որոշեցին.** Նկատի ունենալով Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կարծիքն ու Սոցիոլոգիայի ֆակուլտետի Մրցութային հանձնաժողովի եզրակացությունը` երաշխավորել Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Ադրինե Գարեգինի Բաբլոյանի թեկնածությունը դոցենտի կոչման համար: Համապատասխան կարգով դիմել ՀՀ ԲՈՀ:

**Լսեցին** 2. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Մարիա Իգորի Զասլավսկայայի երաշխավորումը պրոֆեսորի կոչմանը:

**Ելույթ ունեցան`** Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

**Որոշեցին.** Նկատի ունենալով Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կարծիքն ու Սոցիոլոգիայի ֆակուլտետի Սրբութային հանձնաժողովի եզրակացությունը՝ երաշխավորել Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Մարիա Իգորի Զապլավսկայայի թեկնածությունը պրոֆեսորի կոչման համար: Համապատասխան կարգով դիմել ՀՀ ԲՈՀ:

**Լսեցին 3.** ԵՊՀ 2016-2020 ռազմավարական ծրագրի հիման վրա Սոցիոլոգիայի ֆակուլտետի ծրագրային գործողությունների պլանավորման և համադասման հարցը:

**Ելույթ ունեցան՝** Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

**Որոշեցին.** Համապատասխան առաջարկների համաձայն մշակել և ներկայացնել գործողությունների կոնկրետ քայլեր:

**Լսեցին 4.** ԵՊՀ հարյուրամյակին նվիրված միջոցառումների վերաբերյալ ֆակուլտետի առաջարկների մշակումն ու ներկայացումը:

**Ելույթ ունեցան՝** Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

**Որոշեցին.** Ներկայացված առաջարկությունները ըստ կարգի ներկայացնել ԵՊՀ համապատասխան ստորաբաժանմանը:

**Լսեցին 5.** <<Եզնիկ Կողբացու>> անվան անվանական կրթաթոշակի տրամադրման հարցը:

**Ելույթ ունեցան՝** Ա. Սկրտիչյանը Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը:

**Որոշեցին.** 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում <<Եզնիկ Կողբացու>> անվան անվանական կրթաթոշակ տրամադրել Սոցիոլոգիա բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Ալեքսանդրի Իսկանդարյանին:

Քարտուղար՝

Ա.Վ. Աթանեսյան